

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



10-ԱՄՅԱ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2024



ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ



ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 10-ամյա պատմությունն ամփոփող այս տարեգրքի էջերում ևս ջերմորեն շնորհավորում եմ մեր կառույցի հոբելյանական տարեդարձի կապակցությամբ և ցանկանում հակիրճ անդրադարձ կատարել նորանկախ Հայաստանում նախաքննական համակարգի պատմական ակունքներին՝ նպատակ ունենալով ներկայացնել վերջինիս անցած ճանապարհի հիմնական իրողությունները: Այսպիսով, 1998թ. հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքով ամրագրվեց երկրում գործող նախաքննական մարմինների համակարգը՝ ի դեմս դատախազության, ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների քննիչների: Այնուհետև, 2005թ. նոյեմբերի 27-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով փոփոխություններ կատարվեցին Հայաստանի Հանրապետու-

թյան Սահմանադրության դրույթներում, որոնց ուժով չեղարկվեց Դատախազության նախաքննական գործառույթը և համապատասխան լիազորություններ վերապահվեցին նաև Պաշտպանության նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի համակարգում ձևավորված քննչական ստորաբաժանումներին: Այնուամենայնիվ, նախաքննական ստորաբաժանումների գործունեությունը գործադիր իշխանության մարմինների կառուցվածքում խնդիրներ էր առաջացնում նախաքննության օբյեկտիվության և անկողմնակալության տեսանկյունից, ինչն անխուսափելի էր դարձնում երկրում ինքնուրույն և անկախ քննչական մարմին ստեղծելու անհրաժեշտությունը:

Նշված անհրաժեշտությունից ելնելով՝ 2013թ. սեպտեմբերի 24-ին ստեղծվեց միասնական քննչական մարմնի կազմավորման իրավական ապահովման հանձ-

նաժողով, որի կողմից մշակվեց, և 2014թ. մայիսին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքը:

Քննչական կոմիտեն, ըստ էության, ձևավորվեց Ոստիկանության և Պաշտպանության նախարարության քննչական ստորաբաժանումների հենքի վրա, իսկ 2021 թվականին քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից շուրջ 1 տարի անց կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Պետական եկամուտների կոմիտեի, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայության քննչական ստորաբաժանումները ներառվեցին ՀՀ քննչական կոմիտեի համակարգում: Անցնող ժամանակն ապացուցում է միասնական քննչական կառույցին նշված ստորաբաժանումների միացման արդարացվածությունը և վկայում այն մասին, որ նախաքննության կազմակերպման և իրականացման սկզբունքների միասնականացումը, քննչական կառույցի կենտրոնացումը և քննչական ստորաբաժանումների գործունեության համակարգման մակարդակի բարձրացումը հուսալի երաշխիքներ են ապահովում արդյունավետ նախաքննության իրականացման համար, որը մեր գործունեության թիվ մեկ գերակայությունն է:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ կառույցի համապարփակ գործունեության և արդյունավետության տեսանկյունից մեծապես կարևոր էր նաև 2024 թվականի մայիսից ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծումը:

Հայաստանի քննչական կոմիտեն իր 10-ամյա հորեյանը տոնում է հպարտության զգացումով, տոնում է պետական պատշաճ հոգածության արդյունքում օրեցօր գրանցվող առաջընթացներով. հորեյանական տասնամյակ ենք մուտք գործել մեր ծառայողների աշխատավարձերի շեշտակի բարձրացումով, սոցիալական ամենատարբեր երաշխիքների ապահովմամբ, համակարգում շենքային ու աշխատանքային պայմանների էական և նկատելի բարելավումներով, նյութատեխնիկական բազայի պարբերական հագեցմամբ, էլեկտրոնային նախաքննության համար պահանջվող գործիքակազմերի շարունակական համալրումով և ուրախալի ու ոգևորիչ բազմաթիվ այլ դրական զարգացումներով:



Առիթն օգտագործելով՝ ցանկանում եմ երախտիքի խոսքեր ուղղել համակարգի բոլոր աշխատակիցներին՝ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերած տոկունության, անձնվիրության և ամենօրյա անխոնջ աշխատանքի համար: Հպարտությամբ եմ արձանագրում այն զսպվածությունը, որ նրանք հանդես են բերում իրենց լիազորությունների իրականացման ընթացքում ծագող ամենաանկանխատեսելի իրավիճակներում, ինչպես նաև բացառապես մասնագիտական դաշտում գործելու նրանց անսասան կամքն ու վճռականությունը, որոնք մեր համակարգի կայունության և կենսունակության կարևոր գրավականներից են:

Շնորհակալություն եմ հայտնում ահռելի ծանրաբեռնվածության պայմաններում, հանուն մասնագիտական և պաշտոնեական պարտականությունների բարե-

խիղճ կատարման, ցուցաբերած համբերատարության, մասնագիտական պարտքի բարձր գիտակցման և այն զրկանքների համար, որոնք կրում են Քննչական կոմիտեի արժանապատիվ ծառայողները և իրենց ընտանիքի անդամներն ու մտերիմները:

Կրկին շնորհավորելով բոլորիս Քննչական կոմիտեի կազմավորման հոբելյանական տարեդարձի առիթով՝ համակարգի բոլոր աշխատակիցներին մաղթում եմ քաջառողջություն, անսահման երջանկություն, հարատև խաղաղություն, բարօրություն և պատվաբեր ծառայություն՝ ի շահ հայրց պետականության հետագա ամրապնդման և մեր երկրի խաղաղ ու լուսավոր ապագայի:

Աստված պահապան մեր ինքնիշխան պետականությանը և Քննչական կոմիտեին:



ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ (2018-2021թթ.)



ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ջերմորեն շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողներին և վետերաններին, աջակցող մասնագիտական ստորաբաժանումների գործող և նախկին աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնադրման տասներորդ տարեդարձի կապակցությամբ:

Պետական այս կարևորագույն ինստիտուտը տարբեր ժամանակաշրջաններում քաղաքական կոնյունկտուրայի հետևանքով վերանվանվել է, փոփոխել իր գերատեսչական պատկանելությունը, բայց ոչ էությունը: Տասը տարի առաջ վերջապես իրագործվեց այլ գործառույթներից քննչական գործառույթները տարանջատելու՝ գիտականորեն հիմնավորված և արդար գաղափարը, և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն զբաղեցրեց իր ուրույն տեղը պետական համակարգում՝ առանձին գերատեսչության իրավունքով: Խորհրդանշական է, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի վերջնական ձևավորումն իր տրամաբանական ավարտին հասցվեց միայն 2024 թվականին՝ Կոմիտեի ձևավորումից տասը տարի անց:

Որդեգրելով սպայական փառավոր ավանդույթները՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն անցել է բազմաթիվ փորձությունների միջով և կերտել սեփական փառավոր մարտական ուղին:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն, գտնվելով հանցավորության դեմ պայքարի առաջնագծում և լինելով անտեսանելի ռազմաճակատի առաջադեմ մարտիկը, այսօր էլ արագ և արդյունավետ արձագանքում է ինֆորմացիոն հասարակության ժամանակակից մարտահրավերներին և սպառնալիքներին, հետևողականորեն կատարելագործվելով՝ ներդնում է հանցագործություն-

ների բացահայտման և քննության կազմակերպման արդիական մեթոդներ և տեխնիկա-քրեագիտական միջոցներ:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողները, լինելով մինչդատական վարույթի կենտրոնական և առանցքային մարմինը, հանցագործությունների բացահայտման և քննության կազմակերպման ուղեղային կենտրոնը, ամեն օր պատվախնդրորեն պաշտպանում են իրենց համազգեստի պատիվը, վճռական գործողություններով և վիրտուոզ հմտությամբ վերականգնում սոցիալական արդարությունը, քննում և բացահայտում այնպիսի բարդության քրեական վարույթներ, որոնք երբևէ չեն հանդիպել Հայաստանի Հանրապետության դատաիրավական պրակտիկայի պատմության մեջ, պաշտպանում են անձը, հասարակությունը և պետությունը մարդկային այնպիսի արատներից, որոնք, ցավոք նույնիսկ կարող էին փոխել պատմության ընթացքը:

Այսօր Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն իր հաջողությունների շնորհիվ գրավիչ է երիտասարդ այն իրավաբանների համար, որոնք որոշել են ստանձնել այդ բարդ և պատասխանատու առաքելությունը, որը պահանջում է նվիրվածություն ու ինքնագոհաբերություն գործին և Հայրենիքին:

Կրկին շնորհավորելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողներին և վետերաններին, աջակցող մասնագիտական ստորաբաժանումների գործող և նախկին աշխատակիցներին՝ մաղթում եմ քաջառողջություն, հաջողություններ, ամենայն բարիք և նորանոր հաղթանակներ մեր դժվարին գործում:

Շնորհակալություն:



ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ (2014-2018թթ.)



ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ բարեկամներ, ողջունում եմ ձեզ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնադրման 10-ամյա հորեյանի առթիվ:

Քննչական կոմիտեն արդեն, սակայն և դեռ, 10 տարեկան է:

Այն կառուցվել է գրեթե «ավերակների» վրա: Այդ կարճ ժամանակահատվածում անցել ենք մի հաստատակամ ճանապարհ և այսօր այն մի զորեղ կառույց է: Կոմիտե մտնելիս դուք քայլում եք ձեր իսկ զինանշանի կողքով և գնում ձեր աշխատանքով արդարադատությանն օժանդակելու: Հիշեք, որ դա այն ուղին է, որով պետք է գնաք ծառայելու ժողովրդին:

Դուք ծովի հատակից «մարգարիտներ» հանողներ եք: Դրանք այն ապացույցներն են, որոնց շնորհիվ արդարադատությունն է կայանում: Եթե առանձին դեպքերում չգիտեք ինչ անել, վարվեք օրենքով ու չեք սխալվի:

Միշտ մտածեք, որ ձեր աշխատանքը միայն դուք կարող եք անել ու հպարտ եղեք դրանով:

Հաջողություն եմ մաղթում ձեզ՝ որպես իմ ընտանիքի անդամների, ցանկանում՝ խոհեմություն: Ողջ և առողջ եղեք:






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 10-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կազմավորումը, երկրի անկախության հռչակմանը հաջորդած ավելի քան 20 տարիների ընթացքում, այդ մարմնի ստեղծման գաղափարի սաղմնավորման և դրա իրագործման պատմաքաղաքական պայմանների հասունացման ժամանակաշրջանի արդյունք է: Անկախության առաջին տարիներից սկսած՝ մեր երկիրը ձեռնամուխ եղավ դատաիրավական բարեփոխումների իրականացմանը, որոնց նպատակն էր իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացումը:

Հիշյալ նպատակի իրագործման գրավականն ու կարևորագույն նախապայմանն անկախ իրավական և դատական համակարգի ստեղծումն էր: Անցած 3 և ավելի տասնամյակների ընթացքում այդ նպատակին հետամուտ՝ հաղթահարվել են բազմաթիվ մարտահրավերներ ու դժվարություններ, երկրի իրավական համակարգում, դատական իշխանության, դատախազության ու մինչդատական վարույթ իրականացնող մարմինների գործունեությանն առնչվող ոլորտներում կատարվել են նշանակալի բարեփոխումներ, որոնք նկատելի առաջընթաց են ապահովել Հայաստանի Հանրապետությունում արդարադատության ոլորտն իրավական պետության պահանջներին համապատասխանեցնելու ճանապարհին:



Անկախության հռչակումից հետո՝ մինչև 1998 թվականը, հանրապետության տարածքում շարունակում էր գործել ՀԽՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգիրքը, որը նախաքննություն իրականացնելու լիազորություններ էր վերապահում դատախազության, ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների քննիչներին: Ավելի ուշ՝ 1994թ. հունիսին օրենսգրքում

կատարված փոփոխության ուժով, համապատասխան լիազորություններ վերապահվեցին նաև զինվորական ոստիկանության մարմինների քննիչներին:

Հայաստանի հիմնական օրենքի մեջ 2005թ. նոյեմբերի 27-ին կատարվեցին փոփոխություններ, որոնք ազդարարեցին երկրում դատաիրավական բարեփոխումների հերթական փուլի սկիզբը: Պահպանելով Սահմանադրու-



թյամբ ամրագրված դատական իշխանության հայեցակարգը՝ սահմանադրական բարեփոխումներն ուղղվեցին ձևավորված համակարգի կատարելագործմանը:

1998 թվականի հուլիսի 1-ին հանրապետության Ազգային ժողովն ընդունեց քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որի 6-րդ հոդվածի 25-րդ կետով սահմանվեց քննիչի օրենսդրական կարգավիճակը՝ որպես դատախազության, ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների համակարգում աշխատող պաշտոնատար անձի, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն: Օրենսգրքի 55-րդ հոդվածով ամրագրվեցին քննիչի դատավարական

լիազորությունները, իսկ 189-րդ հոդվածով՝ հանրապետությունում գործող նախաքննական մարմինների համակարգը: Սահմանվեց, որ քրեական գործերով նախաքննություն կատարում են դատախազության քննիչները, ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների քննիչները: Հաջորդ՝ 190-րդ հոդվածով, կարգավորվեց քննչական ենթակայությանը վերաբերող հարցերի շրջանակը, համաձայն որոնց՝ նախաքննությունը քրեական օրենսգրքի ավելի քան 100 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում էին դատախազության քննիչները, իսկ մյուս հոդվածներով և դրանց առանձին մասերով նախատեսված հանցագոր-



ծությունների վերաբերյալ գործերով՝ ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների քննիչները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունմանը հաջորդած տարիներին, նախաքննական մարմինների համակարգի բարեփոխումների շուրջ եղած քննարկումների շրջանակներում, քննարկման առարկա է եղել որպես ինքնուրույն կառույց կամ արդարադատության նախարարությանը և կամ որևէ պետական մարմին կից միասնական քննչական մարմին ստեղծելու գաղափարը, սակայն տարբեր պատճառների բերումով այն այդպես էլ չի իրականացվել:

ՀՀ Սահմանադրության մեջ 2005թ. կատարված փոփոխությունների արդյունքում Սահմանադրության

103-րդ հոդվածով սահմանվեցին դատախազության՝ որպես միասնական համակարգի, սահմանադրական լիազորությունները, ինչպես նաև ամրագրվեց, որ Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Ավելի ուշ՝ 2007թ. փետրվարի 22-ին, հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Դատախազության մասին» նոր օրենքը, որն ուժի մեջ մտավ 2007թ. մայիսի 1-ից: Օրենքը միջազգային մի շարք փաստաթղթերի պահանջներին և զարգացած երկրներում դատախազության կազմակերպման և գործունեության արդի մոտեցումներին համապատասխան՝ ներդրեց նոր հայեցակարգ, որով վերացվեց կենտրոնացվածությունը




դատախազության համակարգում, արգելվեց դատախազության կողմից քրեական գործերով նախաքննության իրականացումը՝ դատախազությանը վերապահելով միայն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը: Այսպիսով՝ օրենքի հիմնական նորամուծությունը դատախազությունից նախաքննական գործառույթի չեղարկումն էր, որը համամասնորեն փոխանցվեց ոստիկանության, պաշտպանության նախարարության և մաքսային ու հարկային մարմինների քննչական ստորաբաժանումներին:

Այս փոփոխությամբ սկզբունքային լուծում տրվեց իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում տարիներ շարունակ վիճարկվող այն հարցին, որ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը չի կարող իր ներսում ունենալ նախաքննություն իրականացնող ստորաբաժանում: Դատախազության համակարգում քննիչների առկայությունը ծնում էր նաև այլ հարցեր. մասնավորապես՝ չէր ապահովում դատախազական հսկողության հավասար հետևողականություն դատախազության և այլ նախաքննական մարմինների քննիչների նկատմամբ: Բացի այդ, բացակայում էր դատախազությունում ծառայող գործընկեր դատախազների հետ համակարգի քննիչների ծառայողական հարաբերություններով պայմանավորված՝ վերջիններիս «արտոնյալ» կարգավիճակի ռիսկերը չեզոքացնող հստակ կառուցակարգ, ինչը կասկածներ էր հարուցում

համակարգի ներքո իրականացվող նախաքննության օբյեկտիվության և անկողմնակալության շուրջ:

Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 22-ին «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունումից հետո դատախազության քննիչները, որոշակի անցումային ժամանակաշրջանում, շարունակում էին նախաքննություն իրականացնել իրենց ենթակայության քրեական գործերով: Միաժամանակ, հանրապետության պաշտպանության նախարարության և ոստիկանության համակարգում աշխատանք էր տարվում քննչական ստորաբաժանումների ձևավորման և վերակառուցման ուղղությամբ, ինչպես նաև օրենսդրական փոփոխություններ էին նախապատրաստվում՝ նախաքննական նոր մարմինների քննչական ենթակայության սահմանները հստակեցնելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա հանրապետությունում նախաքննական լիազորություններով օժտվեցին նաև պաշտպանության նախարարությունը և հարկային ու մաքսային մարմինները: Դատախազության քննիչները նախաքննական գործառույթը պահպանեցին ընդհուպ մինչև 2007թ. նոյեմբերի 2-ի օրենքի ընդունումը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվեցին նոր փոփոխություններ: Դրանց ուժով 2007թ. դեկտեմբերի 1-ից դադարեցվեց դատախազու-



թյան նախաքննական գործառույթը, իսկ ՊՆ ռազմական ուստիկանության փոխարեն զինծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային ծառայության զինծառայողներին վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը վերապահվեց պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնին, որի հիմքով ՀՀ պաշտպանության նախարարությունում ստեղծվեց քննչական առանձին մարմին:

2007թ. նոյեմբերի 28-ին Ազգային ժողովն ընդունեց «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքը, որի 2-րդ հոդվածով այդ ծառայությանը վերապահվեց օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև՝ ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն իրականացնելու լիազորու-



թյուն: Դրա հետ կապված՝ նույն օրն ընդունված մեկ այլ օրենքով փոփոխություններ և լրացումեր կատարվեցին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներում, որոնք հստակեցրին Հատուկ քննչական ծառայության քննիչների նախաքննական լիազորությունների սահմանները:

Հետագա տարիների ընթացքում, ընդհուպ մինչև 2013թ. սեպտեմբեր ամիսը, հանրապետության նախաքննական մարմինների կառուցվածքի և լիազորությունների առումով էական փոփոխություններ

չարձանագրվեցին: Նախաքննության պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց էին տալիս, որ թեև դատախազության մարմիններում նախաքննական լիազորությունների չեղարկումն արդարացված էր, այնուամենայնիվ, դրան հաջորդած իրավակազմակերպական միջոցառումները չնպաստեցին նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմանը: Պատճառն այն էր, որ նախաքննական գործառույթներով օժտվեցին ուժային և օպերատիվ-հետախուզական լիազորություն-





ների տիրապետող այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, պաշտպանության նախարարությունը, հարկային և մաքսային մարմինները, ինչի արդյունքում նշված մարմինների քննչական ստորաբաժանումների կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը դարձավ զգուշավոր ու երկչու, իսկ քննչական ստորաբաժանումները սահուն կերպով հայտնվեցին գերատեսչական ենթակայության ներքո և համապատասխան պետական կառավարման մարմինների ներքին շահերի սպասարկման դաշտում, իսկ այդ հանգամանքը չէր կարող չանդրադառնալ նախաքննչական գործառույթի օբյեկտիվության ու չեզոքության վրա:

Վերոհիշյալ իրողություններն աստիճանաբար կենսական էին դարձնում նախաքննչական գործառույթը գերատեսչական ենթակայությունից ձերբազատելու և ինքնուրույն ու անկախ նախաքննչական կառույց ստեղծելու անհրաժեշտությունը: Միասնական քննչական մարմնի ձևավորմանը նախորդեց մեծածավալ գիտավերլուծական աշխատանք, որի ընթացքում գնահատման ենթարկվեցին իրավական և հասարակական-քաղաքական ոլորտներում ձևավորված իրողությունները, ինչպես նաև ուսումնասիրվեց ԽՍՀՄ կազմից տարանջատված և անկախություն հռչակած մյուս հանրապետությունների, այդ թվում՝ Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության փորձը: Մասնավորա-



պես՝ ուսումնասիրվեց Ղազախստանի Հանրապետության օրինակը, որտեղ փորձ էր արվում ստեղծել հանցագործությունների քննության կազմակերպման նոր մոդել, որը, սակայն, կասեցվեց 2013 թվականին: Ուսումնասիրության առարկա դարձավ նաև Ռուսաստանի Դաշնության փորձը, որտեղ 2007 թվականից գործում էր ՌԴ դատախազությանը կից քննչական կոմիտեն, իսկ 2011 թվականին դրա հենքի վրա ստեղծվեց ՌԴ քննչական կոմիտեն՝ որպես ինքնուրույն դաշնային պետական մարմին: Բելառուսի Հանրապետությունում ևս, հանրա-

պետության նախագահի 2011թ. սեպտեմբերի 12-ի հրամանագրով, կազմավորվեց միասնական քննչական մարմին՝ Քննչական կոմիտե:

2013 թվականի սեպտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության նախագահը կարգադրություն ստորագրեց հանրապետությունում միասնական քննչական մարմնի կազմավորման իրավական ապահովման հանձնաժողով ստեղծելու մասին, որին հանձնարարվեց մշակել այդ մարմնի կազմավորման ու գործունեության համար անհրաժեշտ օրենքների նախագծերը:

Հիշյալ հանձնաժողովի կողմից մշակվեց և 2014թ. մայիսի 19-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքը, որով ամբողջական իրավական կարգավորման ենթարկվեցին նորաստեղծ նախաքննական մարմնի կազմավորման, գործունեության, դրանում ծառայության անցնելու կարգը և պայմանները, ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, իրավական և սոցիալական երաշխիքները և ծառայության հետ կապված մյուս հարաբերությունները: Հանրապետության նախա-

գահը նույն թվականի հունիսի 10-ին ստորագրեց օրենքը, ինչին հաջորդած ժամանակահատվածում ՀՀ կառավարությունն իր 2014թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ հաստատեց Քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը, հաստիքացուցակը, իսկ նույն օրվա այլ որոշումներով՝ նաև Կոմիտեի խորհրդանիշի նկարագիրը և ձևը, Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և կրելու կարգը: Մինչ այդ, Ազգային ժողովի կողմից 2014թ. հունիսի 11-ին ընդունված օրենքով փոփոխություններ և լրա-





ցումներ կատարվեցին «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում, որը լրացվեց Կոմիտեի ծառայողի վարձատրությանն առնչվող հարցերը կարգավորող 15.1 հոդվածով:

Հայաստանի քննչական կոմիտեն, ըստ էության, կազմավորվեց ոստիկանության և պաշտպանության նախարարության բնագավառում պետական լիազոր մարմնի քննչական ստորաբաժանումների հենքի վրա: Օրենքը ստորագրվելուց և ուժի մեջ մտնելուց հետո, դրա ան-

ցումային դրույթներով սահմանված կարգավորումներին համապատասխան՝ Քննչական կոմիտեի նախագահը նշանակումներ կատարեց քննչական ծառայության պաշտոններում, որոնք հիմնականում ավարտվեցին 2014թ. հոկտեմբերի 8-ին, իսկ այդ օրը ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ, սահմանվեց որպես Քննչական կոմիտեի ծառայողի օր:

2015թ. հանրապետության Սահմանադրության մեջ պետական մարմինների համակարգում կատարված փո-

փոխություններով քննչական մարմիններին վերապահվեց սահմանադրական կարգավիճակ: Երկրի հիմնական օրենքում նախատեսվեց «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ ինքնուրույն գլուխ, որը հաջորդեց դատական իշխանությանը նվիրված գլխին: Սահմանադրության 178-րդ հոդվածով սահմանվեց, որ «քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթ»: Սահմանադրական նորմի մակարդակով ամրագրվեց, որ քննչական

մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

«Քննչական կոմիտեի մասին» օրենքի ընդունմանը հաջորդած տարիների ընթացքում դրանում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Ազգային ժողովի կողմից ընդունված ընդհանուր առմամբ 15 օրենքներով, որոնցով վերանայվել ու ամբողջացվել են Քննչական կոմիտեում ծառայության անցմանը, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց իրավունքներին ու





պարտականություններին, նրանց կարգավիճակին, աշխատանքի վարձատրությանը, գործունեության իրավական և սոցիալական երաշխիքներին և այլ հարցերին վերաբերող իրավակարգավորումները:

Քննչական միասնական մարմին ձևավորելու ճանապարհին կարևոր հանգրվան հանդիսացավ պետական եկամուտների կոմիտեի և ազգային անվտանգության մարմինների քննչական ստորաբաժանումները ՀՀ քննչական կոմիտեի կառուցվածք տեղափոխելու մասին քաղաքական որոշման կայացումը, որի գործնական

իրագործմանը հանրապետության Ազգային ժողովը ձեռնամուխ եղավ 2021 թվականին՝ նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մշակման և ընդունման աշխատանքներին զուգահեռ: 2021թ. հունիսի 30-ին Ազգային ժողովն ընդունեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ մտավ 2022թ. հուլիսի 1-ից: Նախօրեին՝ 2022թ. հունիսի 9-ին, Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներով համապատասխան փոփոխություններ կատարվեցին «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Հարկային ծառայության մասին»

և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքներում, որոնց ուժով իրականացվեց հարկային ու մաքսային համակարգերի, ինչպես նաև՝ ազգային անվտանգության մարմինների քննիչների տեղափոխումը ՀՀ քննչական կոմիտեի համակարգ՝ համապատասխանաբար 2023թ. հունվարի 1-ից և 2024թ. հունվարի 1-ից: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումների ուժով չեղարկվեց հետաքննության գործառույթը և հետաքննիչների հաստիքները տեղափոխվեցին Քննչական կոմիտեի հաստիքացուցակ: Այդ կապակցությամբ 2022թ. հունվարի 9-ին Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքը, որով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ տեղի ունեցավ հետաքննիչների հաստիքների սահուն տեղափոխումը քննչական կոմիտեի համակարգ: Նշված օրենսդրական փոփոխություններին հաջորդեցին Քննչական կոմիտեի նախագահի 2023թ. հունվարի 3-ի և 2024թ. հունվարի 5-ի՝ համապատասխանաբար թիվ 1-Լ և 3-Լ հրամանները, որոնցով փոփոխություն և լրացումներ կատարվեցին Կոմիտեի նախագահի 2021թ. հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 73-Լ հրամանում և

ձևավորվեցին Կոմիտեի կենտրոնական մարմնի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունը, ինչպես նաև՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունը՝ իրենց կառուցվածքով ու հաստիքային միավորներով: Քննչական նշված ստորաբաժանումները ՀՀ քննչական կոմիտեի համակարգ տեղափոխելը լիովին համահունչ էր քննչական մարմինները գործադիր իշխանության համակարգից դուրս բերելու ռազմավարական նպատակին: Կոմիտեի համակարգ տեղափոխվելու արդյունքում այդ կառույցները թողափեցին գերատեսչական ենթակայության բեռը, ինչպես նաև չեզոքացվեցին նախաքննության օբյեկտիվությունն ու անաչառությունն ապահովելու հարցում այդ ենթակայությամբ պայմանավորված անխուսափելի ռիսկերը: Միասնական կառույցի հովանու ներքո դրանց ինտեգրումը, վստահ ենք, կնպաստի նախաքննության կազմակերպման և իրականացման սկզբունքների, աշխատանքի կազմակերպման, նախաքննության պլանավորման մեթոդների և ձևերի միասնականացմանը, քննչական ապարատի կենտրոնացմանը, դրա կառուցվածքի կատարելագործմանը և քննչական ստորաբաժանումների գործունեության համակարգման մակարդակի բարձրացմանը, որոնք հուսալի երաշխիքներ



կապահովեն նախաքննության կազմակերպման ու իրականացման արդյունավետության համար:

Դրան էր նպատակաուղղված նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. մայիսի 2-ի N 650-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրումը՝ ՀՀ ՆԳՆ փորձաքրեագիտական վարչության հենքի վրա: Օբյեկտիվորեն հասունացած այս փոփոխությունը հնարավորություն կտա բարձրացնել քննիչի

կողմից ապացուցողական կամ վարութային այլ գործողությունների կատարման ընթացքում ցուցաբերվող փորձագիտական օժանդակության, ինչպես նաև՝ նախաքննության, քրեական վարույթի մասնակիցների՝ գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական իրավունքի ապահովման արդյունավետությունը:

Նախաքննական լիազորություններ իրականացնող մարմինների համակարգի բարեփոխման արդյունքում այսօր հանրապետությունում գործում է նախաքննական 2 մարմին՝ Քննչական կոմիտեն և Հատուկ քննչական

ծառայության իրավահաջորդ համարվող Հակակոռուպցիոն կոմիտեն: Պատկերացնելու համար այդ կառույցների նախաքննական ծանրաբեռնվածության տարբերությունը՝ բավական է արձանագրել, որ ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի և տարածքային ստորաբաժանումների կողմից 2023թ. նախաքննություն է իրականացվել հանրապետության տարածքում արձանագրված հանցավոր իրավախախտումների վերաբերյալ նախաձեռնված 98%-ից ավելի քրեական վարույթներով, և միայն 1%-ից փոքր ինչ ավելի վարույթներով է նախաքննությունն իրականացվել Հակակոռուպցիոն կոմիտեի և ազգային անվտանգության մարմինների քննիչների կողմից, իսկ ինչպես վերը նշեցինք, 2024թ. սկզբից ծառայության քննչական հաստիքներն այլևս տեղափոխվել են Կոմիտեի կազմ: Քննչական կոմիտեի կազմավորմանը հաջորդող 2015 թվականից սկսած ևս Քննչական կոմիտեի նախաքննություն իրականացնող ստորաբաժանումներում քննված քրեական վարույթները նախաքննական բոլոր մարմինների վարույթում քննված գործերի ընդհանուր տեսակարար կշռում մշտապես գերազանցել են 90%-ի շեմը: Այս արձանագրումը միանգամայն արդիական է դարձնում նախաքննական գործառույթի իրականացման առումով Քննչական կոմիտեի դերակատարումն

ու կշիռը պատկերացնելու և այդ ծանրաբեռնվածությունն իրենց ուսերին կրող Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի օբյեկտիվ դժվարությունները գնահատելու և նրանց գործունեության պայմանների բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Շնորհակալությամբ պետք է փաստենք, որ արդեն մեկ տարուց փոքր-ինչ ավելի է, ինչ Կառավարության նախաձեռնությամբ, օրենսդրական համապատասխան փոփոխության ուժով, գրեթե կրկնապատկվել է համակարգի ծառայողների աշխատանքի վարձատրությունը, որի արդյունքում զգալիորեն աճել է ծառայության գրավչությունը Կոմիտեում և համակարգում ծառայության անցնելու դիմելիությունը: Այդ պատճառով է, որ Կոմիտեի ղեկավարությունը և Որակավորման հանձնաժողովը որդեգրել են Կոմիտեում ծառայության անցնելու համար դիմած հայտատուների տեսական գիտելիքների ու գործնական հմտությունների, նրանց հոգեբանական ու բարոյական որակների ստուգման և գնահատման բարձր չափորոշիչներ և համակարգում աշխատելու հնարավորություն տրվում է միայն դրանց համապատասխանող անձանց: Կոմիտեի ղեկավարությունը, միևնույն ժամանակ, հետևողական է իրենց ծառայողական պարտականությունների նկատմամբ ան-



պատասխանատու մոտեցում ցուցաբերող, դրանց լրջություները չգիտակցող, իրենց վարքագծով համակարգի պատիվն ու բարի համբավն արատավորող քննիչների նկատմամբ կարգապահական պատասխանատվության համարժեք միջոցներ կիրառելու հարցում, ինչպիսի մոտեցումը նպատակ ունի պահպանել համակարգի կենսունակ ներուժը և քաջալերել իրենց պարտականությունները բարեխղճորեն և պատվախնդրորեն կատարող ծառայողների աշխատանքը:

Քննչական մարմինների կողմից նախաքննական լիազորությունների արդյունավետ իրականացումը քրեական արդարադատության համակարգի կայացած լինելու և պետության կողմից իրականացվող քրեական քաղաքականության հաջողության գրավականներից է: Ճիշտ կազմակերպված նախաքննությունը երկրում օրինականության հաստատման, հանցավորության դեմ պայքարի ուժեղացման, հանցագործությունների արագ ու լիարժեք բացահայտման և հանցանք կատարած անձանց նկատմամբ օրինական, հիմնավորված ու արդարացի դատական ակտերի կայացման կարևոր երաշխիք է: Հետևաբար, նախաքննական լիազորությունների իրականացման օրենսդրական կառուցակարգերի հետագա բարելավումը, քննիչների դատավարական անկախու-

թյան ու ինքնուրույնության բարձրացումը, նրանց գործունեության իրավական ու սոցիալական երաշխիքների ընդլայնումը կարևոր ուղենիշներ են նախաքննության արդյունավետության բարձրացման ճանապարհին: Ուստի՝ Քննչական կոմիտեի համակարգային ու գործառույթային բարեփոխումների ռազմավարությունը պետք է ուղղված լինի այդ նպատակների իրացման ուղղությամբ օրենսդրական և կազմակերպական բնույթի միջոցառումների շարունակական իրականացմանը:

Իր երկրորդ տասնամյակ ՀՀ քննչական կոմիտեն թևակոխում է որպես կայացած և զարգացող համակարգ: Այդ իրողության ցուցիչ է նաև 2024 թվականին, ՀՀ քննչական կոմիտեի ձևավորման 10-րդ հոբելյանական տարվա ընթացքում, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի վետերանների խորհուրդ» հասարակական կազմակերպության ստեղծման հանգամանքը: Վետերանների խորհուրդը համախմբում է ՀՀ քննչական կոմիտեի նախկին աշխատակիցներին՝ հնարավորություն ստեղծելով առավել նպատակային օգտագործելու նրանց ներուժն ու գիտելիքները ՀՀ քննչական կոմիտեի երիտասարդ, համակարգ նոր մտած քննիչների ավելի արագ մասնագիտական փորձառության ձեռքբերման համար:

«ՔՆՆԻՉ» ԵԶՐՈՒՅԹԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆԻՉԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Քննիչ» եզրույթը ծագել է «քննել» բառից, ինչը Է.Բ. Աղայանի բացատրական բառարանի համաձայն ունի մի քանի նշանակություն՝ ուսումնասիրել, հետազոտել, հետախուզել, հարցաքննել, գործն ըստ էության քննության առնել դատարանում, ստուգել, աշխատել թափանցել գաղտնիքների մեջ: Նույն բառարանի համաձայն՝ քննիչը նախնական քննությունը կատարող պաշտոնական անձն է:

Քննիչը քրեական դատավարությունում ինքնուրույն կարգավիճակ և առանցքային դերակատարում ունեցող սուբյեկտ է: Մինչդատական վարույթում նա օժտված է լիազորությունների լայն շրջանակով, որոնք նրան հնարավորություն են տալիս լուծել իր առջև դրված խնդիրները:

Ժամանակակից քննիչի նախատիպը ֆրանսիական քննիչ-դատավորն է (judge d'instruction), որը ֆրանսիացի հայտնի իրավաբան, պրոֆեսոր Վիլֆրիդ Ժանդիդիեյի բնորոշմամբ՝ «քրեական դատավարության ամենագեղեցիկ ինստիտուտներից է»: Քննիչ-դատավորի ինստիտուտը Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսդրությունում ներդրվել է 19-րդ դարի սկզբին՝ 1808 թվականին, Ֆրանսիայի քրեական հետաքննության օրենսգրքի (Code d'Instruction criminelle) ընդունմամբ:

Ֆրանսիական քրեադատավարական դոկտրինի համաձայն՝ քննիչը միաժամանակ նաև դատավոր է, ինչը վերջինիս գործունեության անկախության համար ապահովում է առավելագույն դատավարական երաշխիքներ: Մինչդատական վարույթի կազմակերպման ֆրանսիական դոկտրինը մինչ օրս էլ կիրառվում է մայրցամաքային եվրոպայի երկրների մեծամասնությունում: Այն կիրառվել է նաև ցարական Ռուսաստանում՝ 1860թ. հունիսի 8-ին, Ալեքսանդր 2-րդի կողմից ստորագրված՝ «Ոստիկանությունից քննչական մասն առանձնացնելու մասին» հրամանագրի ուժով, որով ցարական Ռուսաստանում ներդրվեց դատական քննիչի պաշտոնը, որը դարձավ ժամանակակից քննիչի նախատիպը:

1864թ. Ռուսական կայսրությունում ընդունված քրեական դատավարության դատական կանոնադրության մեջ ամրագրվեց, որ նախաքննությունն իրականացնում է դատական քննիչը, որը գործում է դատական գերատեսչության կազմում և քննչական ու դատավարական գործողությունների վերաբերյալ բոլոր որոշումներն ընդունում է ինքնուրույն: Ի տարբերություն ժամանակակից քննիչի՝ նա իրավունք չունեի առաջադրել մեղադրանք, ինչպես նաև որոշումներ ընդունել անձի մեղավորության վերաբերյալ:



Քրեական գործի վարույթ նախաձեռնելու և մեղադրական ակտ կազմելու լիազորությունները վերապահվում էին դատախազին:

Քննիչը դատավարական առումով անկախ և անփոխարինելի սուբյեկտ էր: Նա համարվում էր օկրուգային դատարանի անդամ և դատավորների անբավարարության դեպքում՝ կարող էր ընդգրկվել դատարանի կազմում: Նրա գործունեության շրջանակը ներառում էր հետաքննությունը և նախաքննությունը: Քննիչը հարուցում էր քրեական գործ յուրաքանչյուր դեպքում, երբ բավարար տվյալներ էին հավաքվում առերևույթ կատարված հանցանքի վերաբերյալ: Նա ղեկավարում էր ոստիկանության օպերատիվ գործունեությունը, հարցաքննում էր վկաներին և կասկածյալներին, հավաքում ապացույցներ: Քննիչը տեղեկացնում էր դատախազությանը քննչական գործի հարուցման մասին և պարտավոր էր իր գործողությունների մասին տեղյակ պահել դատախազին: Նա իրավունք չուներ ավարտել քննչական գործը, ինչպես նաև՝ կատարել իրավաբանորեն նշանակալի հետևություններ: Երբ քննիչը գտնում էր, որ մեղադրանքի կամ գործը կարճելու համար առկա են բավարար հիմնավոր ապացույցներ, ապա գործը հանձնում էր դատախազին:

Հայաստանի առաջին հանրապետությունում քննիչի ինստիտուտի ձևավորման նախադրյալները սերտորեն կապված են անկախ պետականության հռչակման և դրան հաջորդած ժամանակաշրջանում դատաիրավական

համակարգի ձևավորման գործընթացների հետ: 1918թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Խորհուրդն ընդունեց «Հայաստանի տերիտորիայի վրա նախկին Ռուսական կայսրության օրենքների գործադրման մասին» օրենքը, որով հռչակվեց, որ «Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա ժամանակավորապես գործում են Ռուսական կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի ու Հայաստանի Խորհրդի փոփոխություններով ու լրացումներով»: Նույն օրը օրենքներ ընդունվեցին նաև Ռուսական կայսրության դատական համակարգը ներմուծելու մասին, որոնցով Հայաստանի իրավական համակարգում ներդրվեց դատական քննիչի ինստիտուտը:

Դատական քննիչները նախաքննություն էին իրականացնում ոստիկանության աջակցությամբ՝ դատախազի ու նրա օգնականների հսկողության ներքո: Նախաքննության գործառույթը ենթադրում էր նյութերի հավաքագրում՝ կոնկրետ անձին կամ անձանց մեղադրանք առաջադրելու համար: Ավարտելով քննությունը՝ դատական քննիչը դրա արդյունքները հանձնում էր դատախազին, որն էլ ստուգելով քննության նյութերը՝ կազմում էր մեղադրական ակտ:

Նախաքննության կազմակերպման և իրականացման նշված մոդելը գործել է մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, որից հետո այն չեղարկվել է, իսկ դատական քննիչի պաշտոնը՝ վերացվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2014-2024ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2014-2024թթ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեում քննվել է 335.079 քրեական վարույթ, որից 42.255 վարույթ՝ 52.690 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 102.414 վարույթ կարճվել է, 35.567 վարույթ միացվել: Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 57.688.310.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 3.200.869.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 4.445.782.000 ՀՀ դրամը:

Տասնամյա գործունեության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ծառայողներն արժանացել են 5.616 խրախուսանքի, իսկ 48 ծառայող՝ պետական պարգևների:

ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ
Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական*



ՎԻԳԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական*



ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻ-ՔՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական*



ԱՐՄԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական*




ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական*



Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կոլեգիա





ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 2014 թվականի հոկտեմբերի 24-ի հրամանով ՀՀ քննչական կոմիտեում ձևավորվել է կոլեգիա, որի նպատակն է ՀՀ քննչական կոմիտեի գործունեության առավել հրատապ և արդիական հիմնահարցերի քննարկման, դրանց արագ և համարժեք արձագանքման ապահովումը:

Կոլեգիան խորհրդակցական մարմին է, որի իրավասությունների մեջ է մտնում կոլեգիալ լուծում պահանջող քննչական կոմիտեի իրավասությանը վերաբերող ցանկացած հարցի քննարկումը:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿԱԶՄԸ

ԿԱՄՈ ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագահ՝

ՀՀ քննչական կոմիտեի
հատուկ հանձնարարություններով
գլխավոր վարչության պետ

ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ

ԿԱՄՈ ՇԱՌՈՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական
վարչությունների գործունեության վերահսկողության
գլխավոր վարչության պետ

Անդամներ՝

ՎԻԳԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ

ԱԶԱՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական
վարչության պետ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ

ԳԵՎՈՐԳ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի
քննության գլխավոր վարչության պետի տեղակալ

ԱՐՄԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ

ԳԱԳԻԿ ՄԱՅԻԼՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական
գլխավոր վարչության պետի տեղակալ

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ

**ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդականներ,
մամուլի քարտուղար և օգնական**



ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդական

ԱՐՇԱԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդական

ՍԵՐԳԵՅ ԱՌՍԱՄՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդական

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի օգնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ



ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչություն

(գլխավոր վարչության պետ՝ Արթուր Մելիքյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մամիկոնյանց փողոց 46/5 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կազմում են գործում մարդու դեմ ուղղված հանցագործությունների, մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների, կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների, խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունները:

2014-2024թթ. ընթացքում Հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվել է 5.832

քրեական վարույթ, որից 643 վարույթ՝ 1.461 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 774 վարույթ կարճվել է, 2.216 վարույթ միացվել է, 374 վարույթ՝ ուղարկվել այլ մարմին:

Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 2.496.663.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 471.016.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 166.908.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ վարչությունն ունեցել է 40 հաստիքային միավոր, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 61 հաստիքային միավորով:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 413 խրախուսանքի, այդ թվում՝ 8 ծառայող՝ պետական պարգևների:

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն

(գլխավոր վարչության պետ՝ Արսեն Սիմոնյան)





Կազմավորվել է 2023թ. հունվարի 4-ին: Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Դեղատան 3 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության կազմում են գործում առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ վարչությունները:

Գլխավոր վարչությունում քննվել է 3.368 քրեական վարույթ, որից 114 վարույթ՝ 156 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 624 վարույթ կարճվել է, 362 վարույթ միացվել է, 152 վարույթ՝ ուղարկվել այլ մարմին:

Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 43.806.061.000 ՀՀ դրամը:

Գլխավոր վարչությունն աշխատանքներն իրականացնում է 50 հաստիքային միավորով:

Գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 54 խրախուսանքի:

Պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն

(գլխավոր վարչության պետ՝ Գևորգ Բաղդասարյան)





Գլխավոր վարչությունը ձևավորվել է 2024 թվականի հունվարի 5-ին՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով: ՀՀ քննչական կոմիտեի կազմում նոր վարչության ձևավորումը պայմանավորված է եղել ազգային անվտանգության մարմիններում նախաքննություն իրականացնող ստորաբաժանման գործունեության դադարեցմամբ: Այս փոփոխությամբ ամբողջացվել է Հայաստանի Հանրապետությունում միասնական քննչական մարմնի ստեղծման ռազմավարական նպատակը:

Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մամիկոնյաց 48 հասցեում:

Գլխավոր վարչությունը կազմված է 4 վարչությունից և գործում է 46 հաստիքային կազմով, այդ թվում՝ քննիչի 39 հաստիքով:

Գլխավոր վարչությանն է վերապահված հասարակական անվտանգության, սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության և կառավարման կարգի դեմ ուղղված առավել ծանր հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչության, զանգվածային անկարգությունների, պետական դավաճանության, լրտեսության, իշխանությունը յուրացնելու, սահմանադրական կարգը տապալելու, պետական սահմանն ապօ-

րինի հատելու, ապօրինի միգրացիա կազմակերպելու վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննությունը:

Գործունեության կարճ ժամանակահատվածում ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաքննություն է իրականացվել շուրջ 400 ակտիվ քրեական վարույթներով, որոնցից ավելի քան 70-ը, այդ թվում՝ ահաբեկչության վերաբերյալ 3, պետական դավաճանության և լրտեսության վերաբերյալ 2 քրեական վարույթ, ավարտվել է մեղադրական եզրակացություն կազմելով:

Գլխավոր վարչության քննիչներին են հանձնարարվել նաև մեծ հնչեղություն ունեցող կոռուպցիոն բնույթի բազմադրվագ հանցագործությունների վերաբերյալ մի շարք քրեական վարույթներ, որոնց մի մասի նախաքննությունն ավարտվել է, և քրեական վարույթներն ուղարկվել են դատարան:

Գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթներով, 2024թ. առաջին կիսամյակի ընթացքում, վերականգնվել է պետությանը պատճառված շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամ վնաս:

**ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների
գործունեության վերահսկողության գլխավոր վարչություն**

(գլխավոր վարչության պետ՝ Կամո Շառոյան)





Գլխավոր վարչությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մասնաշենքում՝ քաղաք Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

2014թ. հոկտեմբերից իրականացրել է Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների գործունեության վերահսկողություն: Մինչ օրս համակարգում է Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների գործունեությունը:

Գլխավոր վարչության կողմից ուսումնասիրվել են տարածքային ստորաբաժանումներից ստացված քրեական վարույթը կարճելու մասին որոշումների 5.847 նախագծեր և 13.745 դատավարական այլ փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված բացթողումների և թերությունների վերաբերյալ ստորաբաժանումների ղեկավարներին ուղարկվել են հանձնարարություններ:

Գլխավոր վարչությունում քննարկվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից ստացված 308 հարցում, ընթացք է տրվել քաղաքացիների 11.256 դիմում-բողոքի, տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից ստացված 9.159 հարցման և գրության, ինչպես նաև՝ տարածքային ստորաբաժանումներից ստացված 20.502 գրության:

Նշված ժամանակահատվածում Գլխավոր վարչությունում ստացվել է 8.321 քրեական վարույթ, որոնք ուսումնասիրվել և ուղարկվել են ըստ ենթակայության:

Իրականացվել են նաև նախաքննության փուլում

գտնվող քրեական վարույթների թվայնացված նյութերի ուսումնասիրություններ, ինչի արդյունքում, միայն 2021 թվականից մինչև 2024 թվականի առաջին կիսամյակն ընկած ծամանակահատվածում, վարույթն իրականացնող մարմինն տրվել է 145 մեթոդական հանձնարարություն:

Բացի հիմնական գործառույթներից, Գլխավոր վարչությունում իրականացվել է նաև մինչդատական վարույթ: Մասնավորապես՝ Գլխավոր վարչության քննիչների կողմից քննվել է 97 քրեական վարույթ, որից 6-ը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 23-ը կարճվել է, 48 քրեական վարույթ ուղարկվել է Կոմիտեի այլ ստորաբաժանումներ կամ այլ նախաքննական մարմին:

Ուսումնասիրվել և վերլուծվել են արձանագրված սպանությունների, սպանության փորձերի, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ինքնասպանությունների, ավազակային հարձակմամբ ուրիշի գույքը հափշտակելու, խուլիգանությունների, ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելու, ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման, անչափահասների կողմից կատարված հանցագործությունների, ինչպես նաև՝ մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթների քննության պրակտիկան, տարածքային ստորաբաժանումներից պահանջած ընթացիկ քրեական վարույթներով հարուցված քրեական հետապնդումների և կալանքի տակ գտնվող մեղադրյալների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչություն

(գլխավոր վարչության պետ՝ Կամո Սահակյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մամիկոնյանց փողոց 46/5 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության կազմում են գործում հատուկ հանձնարարություններով գործերի քննության և կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչությունները:

ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 12-ի 1219-Ա որոշման համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչությունը և կազմակերպական-վերլուծական բաժինը միաձուլվել են՝ ստեղծելով հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչությունը:

16.03.2022թ. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի թիվ 51-Լ հրամանով հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչությունը վերանվանվել է հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության:

2019-2024թթ. ընթացքում հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում քննվել է 317 քրեական վարույթ, որից 43-ն ուղարկվել է դատարան, 54 վարույթ կարճվել է, 120 վարույթ կասեցվել է, 31 վարույթ՝ ուղարկվել այլ մարմին:

Քննված և ավարտված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 465.645.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 2.250.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 1.957.000 ՀՀ դրամը:

Նշված ժամանակահատվածում իրականացվել է 25 ուսումնասիրություն ՀՀ քննչական կոմիտեի 23 ստորաբա-

ժանումներում, որոնց կապակցությամբ կազմվել են զեկուցագրեր և ներկայացվել Կոմիտեի նախագահին:

Սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել Կոմիտեի նախագահի կողմից հսկողության վերցված փաստաթղթերի կատարման ժամկետների պահպանման նկատմամբ:

Գլխավոր վարչությունում ստացվել, ուսումնասիրվել և ամփոփվել են Կոմիտեի ստորաբաժանումների կողմից կատարված քննչական աշխատանքների վերաբերյալ ամսական, կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվությունները:

Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններից և ստորաբաժանումներից ստացված տվյալների հիման վրա ամսական կտրվածքով ամփոփվել և Կոմիտեի նախագահին են ներկայացվել մինչդատական վարույթի վերաբերյալ ամսական ցուցանիշները:

Կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչության փորձագետների կողմից մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական աջակցություն ցուցաբերելու գործում:

2019 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ վարչությունն ունեցել է 16 հաստիքային միավոր, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 21 հաստիքային միավորով:

Գործունեության ընթացքում ծառայողներն արժանացել են 14 խրախուսանքի, այդ թվում՝ 1 ծառայող՝ պետական պարգևի:

**ՀՀ քննչական կոմիտեի
ներքին անվտանգության վարչություն**

(վարչության պետ՝ Հայկ Երեմյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Պ. Սևակի 4 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունն իր տասնամյա գործունեության ընթացքում նպաստել է ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց շրջանում ծառայողական կարգապահության ամրապնդմանը, կանխարգելել է հնարավոր խախտման դեպքերը:

Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության կողմից կատարված նախնական ուսումնասիրությունների արդյունքներով մշտապես վեր են հանվել կարգապահական խախտումներ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, դրանց վերացման ուղղությամբ ներկայացվել են առաջարկություններ:

Ներքին անվտանգության վարչության արձանագրած խնդիրները վերացնելու նպատակով Կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում հրավիրվել են բազմաթիվ օպերատիվ խորհրդակցություններ, քննարկման առարկա են դարձվել կարգապահական խախտման դեպքերը, տրվել են հստակ հանձնարարականներ, որոնք բերել են դրական արդյունքների:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ, Ներքին անվտանգության վարչությունն իրականացնում է նաև ստուգողական գործողություններ՝ նպատակ ունենալով ապահովել կառույցի բնականոն, արդյունավետ աշխատանքը, այդ թվում նաև՝ չարատավորված կադրերով Կոմիտեն համալրելու գործընթացը:

ՀՀ քննչական կոմիտեի իրավաբանական վարչություն

(վարչության պետ՝ Արթուր Վարդանյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մամիկոնյանց փողոց 46/5 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի ստեղծման պահից Կոմիտեի դեպարտամենտի կազմում գործել է իրավական ապահովման և վիճակագրության վարչությունը՝ քաղաքացիական ծառայողների հաստիքներով: Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ Կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության գործունեությունը դադարեցվել է, փոխարենը Կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 1-ի 73-Լ հրամանի համաձայն՝ Կոմիտեի հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչության քրեագիտական վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվել է Իրավաբանական վարչությունը՝ 5 հաստիքային միավորով՝ որպես հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2021-2024թթ. ընթացքում Իրավաբանական վարչու-

թյունում մշակվել է օրենքի 33 նախագիծ, ՀՀ կառավարության և վարչապետի որոշման 41 նախագիծ, Կոմիտեի նախագահի և Կոմիտեի նախագահի տեղակալների 566 ներքին իրավական ակտ: Այլ մարմիններից ստացված 706 իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացվել է կարծիք:

Ներկայացնելով Կոմիտեի շահերը ՀՀ դատական ատյաններում՝ իրավաբանական վարչությունում կազմվել և դատարան է ներկայացվել 59 հայցադիմումի պատասխան, ինչպես նաև՝ երեք տասնյակի հասնող միջնորդություններ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ: Հաշվետու ժամանակահատվածում 28 գործով եզրափակիչ դատական ակտերը կայացվել են հօգուտ Կոմիտեի:

Ներկայումս վարչությունում աշխատանքներն իրականացվում է 6 հաստիքով:

Եռամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 15 խրախուսանքի:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժին

(բաժնի պետ՝ Անուշ Գասպարյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մամիկոնյանց փողոց 46/5 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի կողմից 2014-2024թթ. ընթացքում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կատարման, ինչպես նաև Կոմիտեի ստորաբաժանումներում իրականացվող քրեական վարույթներով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղղված հարցումներն ուղարկելու ուղղությամբ:

2014-2024թթ. ընթացքում բաժնում քննարկվել է ընդհանուր 5.718 հարցում, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 2.282 հարցում և Քննչական կոմիտեում իրականացվող քրեական վարույթներով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկված 3.436 հարցում:

Բացի այդ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 102 քրեական վարույթ, որոնցով անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո, հետագա ընթացքը լուծելու նպատակով, փոխանցվել են Կոմիտեի ստորաբաժանումներին:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում 2014-2024թթ. ընթացքում բաժնի կողմից

կազմակերպվել են նաև Կոմիտեի նախագահի գլխավորած պատվիրակության այցերն օտարերկրյա պետություններ, Հայաստանում օտարերկրյա պետությունների դեսպանություններ, Կոմիտեի նախագահի, ոլորտը համակարգող տեղակալի և մի շարք օտարերկրյա պետությունների արտակարգ և լիազոր դեսպանների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների, ներկայացուցիչների, Հայաստանում տարբեր պետությունների դեսպանությունների իրավապահ ոլորտի գործընկերների հետ հանդիպումներ: 2014-2024թթ. ընթացքում միջազգային-իրավական համագործակցության ոլորտում կնքվել են համագործակցության բազմաթիվ հուշագրեր:

Մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները կատարելագործելու նպատակով կազմակերպվել են Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ծառայողական գործուղումներ տարբեր պետություններ:

2014թ. հոկտեմբերի 8-ից մինչ օրս բաժինն ունի 5 հաստիքային միավոր:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են խրախուսանքների:

ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչություն

(գլխավոր վարչության պետ՝ Արման Ասլանյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Բաբայան փողոց 4 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կազմում են գործում վերահսկողության վարչությունը, հատկապես կարևոր գործերի քննության վարչությունը, կայազորային վարչությունը, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ և տասներորդ կայազորային քննչական բաժինները:

2014-2024թթ. ընթացքում Զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննվել է 42.086 քրեական վարույթ, որը կազմում է տասը տարիների ընթացքում ՀՀ քննչական կոմիտեում քննված 315.981 վարույթի 13,3 տոկոսը: Քննված 42.086 վարույթից 5.581-ը՝ 7.698 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 17.841 վարույթ կարճվել է, 3.814 վարույթ միացվել է, 2.131 վարույթ՝ ուղարկվել այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 2.932.141.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 10.418.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 67.302.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ վարչությունն ունեցել է 105 հաստիքային միավոր, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 139 հաստիքային միավորով:

Գրանցված տարեկան արդյունքներով՝ վեցերորդ կայազորային քննչական բաժինը (2018թ., 2022թ.) և չորրորդ կայազորային քննչական բաժինը (2023թ.) ճանաչվել են «Տարվա ստորաբաժանում»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 756 խրախուսանքի, այդ թվում՝ 11 ծառայող՝ պետական պարգևների:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչություն

(վարչության պետ՝ Արման Աղասարյան)





ՀՀ ՔԿ ԶԲԳՎ կայազորային վարչությունն առանձին զորամիավորումներում զինծառայողների կողմից և նրանց մասնակցությամբ կատարված հանցագործության դեպքերով իրականացնում է նախաքննություն: Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մագմանյան փողոց 5 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչությունում քննվել է 12896 քրեական վարույթ, որից 2258 վարույթ՝ 3227 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 2458 վարույթ կարճվել է, 1066 վարույթ միացվել է, 350 վարույթ՝ ուղարկվել այլ մարմին:

Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 89.250.235 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 7.465.960 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 29.617.483 ՀՀ դրամը:

Կայազորային վարչությունն ունի 16 հաստիքային միավոր:

2015 թվականի ընթացքում գրանցված արդյունքներով ստորաբաժանման մեկ քննիչ ճանաչվել է «Տարվա քննիչ»:

**ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության
երրորդ կայազորային քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Վահան Վիրաբյան)





Կազմավորվել է 2023թ. և գործունեությունն իրականացնում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Սիսական փողոց 23ա հասցեում: Քննչական բաժնում քննված 612 քրեական վարույթից 65-ը՝ 138 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 170 վարույթ կարճվել է, 25 վարույթ միացվել է, 13 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 475.000 ՀՀ դրամը:

Երրորդ կայազորային քննչական բաժինն աշխատանքներն իրականացնում է 10 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, ՀԿԳ քննիչ - 2, ավագ քննիչ - 2, քննիչ - 3:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են պարգևների և խրախուսանքների:

**ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության
չորրորդ կայազորային քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Հարություն Միքայելյան)





Գործունեությունն իրականացնում է երևան քաղաքի Բաբայան փողոց 6 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում չորրորդ կայագորային քննչական բաժնում քննվել է 16.539 քրեական վարույթ, որից 1.037-ը՝ 1.316 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 7.744 վարույթ կարճվել է, 767 վարույթ միացվել է, 317 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 40.740.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 1.693.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական

բաժինն ունեցել է 14 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, քննիչ - 5, ավագ քննիչ - 4, ՀԿԳ քննիչ - 3, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 31 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 3, ՀԿԳ քննիչ - 11, ավագ քննիչ - 7, քննիչ - 9:

2023թ. գրանցված արդյունքներով՝ չորրորդ կայագորային քննչական բաժինը ճանաչվել է «Տարվա ստորաբաժանում»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 185 խրախուսանքի:

**ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության
հինգերորդ կայազորային քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Վահրամ Գյոզալյան)





Գործունեությունն իրականացնում է Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Նաիրյան փողոց 189 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում հինգերորդ կայազորային քննչական բաժնում քննվել է 2.278 քրեական վարույթ, որից 364-ը՝ 516 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 643 վարույթ կարգվել է, 185 վարույթ միացվել է, 62 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 37.339.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 198.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 479.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժնն ունեցել է 7 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, քննիչ - 2, ավագ քննիչ - 1, ՀԿԳ քննիչ - 2, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 11 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, ՀԿԳ քննիչ - 3, ավագ քննիչ - 2, քննիչ - 3:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 55 խրախուսանքի:

**ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության
վեցերորդ կայազորային քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Արտակ Ոսկանյան)





Գործունեությունն իրականացնում է Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում:

2014-2024թթ. ընթացքում վեցերորդ կայազորային քննչական բաժնում քննվել է 2.300 քրեական վարույթ, որից 603-ը՝ 907 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 926 վարույթ կարճվել է, 273 վարույթ միացվել է, 73 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 21.891.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 80.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 3.564.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 9 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, քննիչ - 3, ավագ քննիչ - 2, ՀԿԳ քննիչ - 1, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 12 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, ՀԿԳ քննիչ - 3, ավագ քննիչ - 2, քննիչ - 4:

Գրանցված տարեկան արդյունքներով՝ վեցերորդ կայազորային քննչական բաժինը 2018թ. և 2022թ. ճանաչվել է «Տարվա ստորաբաժանում»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 69 խրախուսանքի:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության յոթերորդ կայազորային քննչական բաժին

(բաժնի պետ՝ Մարտիրոս Ավագյան)





Գործունեությունն իրականացնում է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 12 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում յոթերորդ կայազորային քննչական բաժնում քննվել է 2.490 քրեական վարույթ, որից 278-ը՝ 371 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1.337 վարույթ կարճվել է, 110 վարույթ միացվել է, 56 վարույթ ուղարկվել է այլ մարմին: Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 7.228.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 2.512.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 5 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, քննիչ - 1, ավագ քննիչ - 1, ՀԿԳ քննիչ - 1, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 8 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, ՀԿԳ քննիչ - 1, ավագ քննիչ - 3, քննիչ - 2:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 45 խրախուսանքի:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժին

(բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Սարգիս Առաքելյան)





Գործունեությունն իրականացնում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Թամանցիների փողոց 45/1 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում ութերորդ կայազորային քննչական բաժնում քննվել է 3.673 քրեական վարույթ, որից 460-ը՝ 617 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 618 վարույթ կարճվել է, 327 վարույթ միացվել է, 386 վարույթ ուղարկվել է այլ մարմին: Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 27.501.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 401.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 6.765.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 7 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, քննիչ - 2, ավագ քննիչ - 1, ՀԿԳ քննիչ - 2, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 9 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, ՀԿԳ քննիչ - 2, ավագ քննիչ - 2, քննիչ - 2:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 60 խրախուսանքի:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժին

(բաժնի պետ՝ Դավիթ Զաքարյան)





Գործունեությունն իրականացնում է Սյունիքի մարզի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոց 4 հասցեում: 2014-2024թթ. ընթացքում իններորդ կայազորային քննչական բաժնում քննվել է 2.447 քրեական վարույթ, որից 494 վարույթը՝ 614 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 746 վարույթ կարճվել է, 293 վարույթ միացվել է, 522 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 25.624.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 104.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 1.639.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 7 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, քննիչ - 2, ավագ քննիչ - 1, ՀԿԳ քննիչ - 1, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 8 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, ՀԿԳ քննիչ - 2, ավագ քննիչ - 2, քննիչ - 1:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 75 խրախուսանքի:

**ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության
տասներորդ կայազորային քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Վարդան Սմբատյան)





Գործունեությունն իրականացնում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց 19 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում տասներորդ կայագորային քննչական բաժնում քննվել է 3.768 քրեական վարույթ, որից 208-ը՝ 264 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1.804 վարույթ կարճվել է, 485 վարույթ միացվել է, 54 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 9.383.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 340.000

ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 21.668.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժնն ունեցել է 3 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, ավագ քննիչ, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 8 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, ՀԿԳ քննիչ, ավագ քննիչ - 2, քննիչ - 3:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 38 խրախուսանքի:

**ՀՀ քննչական կոմիտեի՝
պատերազմական հանցագործությունների
նախաքննություն կատարած քննիչները**





2020թ. սեպտեմբերի 27-ից սկիզբ առած 44-օրյա պատերազմի ընթացքում ինչպես ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ՝ Քննչական կոմիտեում ձևավորված քննչական խմբի կողմից քննության առարկա են դարձվել ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և վարելու, ռազմական գործողությունների ընթացքում հավաքագրված վարձկաններ օգտագործելու, պատերազմ վարելու արգելված մեթոդներ և միջոցներ կիրառելու, Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությանը համակարգված, կանխամտածված և նպատակաուղղված գրոհների թիրախ դարձնելու, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լրջագույն խախտումներ թույլ տալու, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների կողմից զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարման դեպքերը:

44-օրյա պատերազմի ընթացքում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև ռազմական գործողություններին առնչվող այլ հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով համակողմանի և խորացված քննություն կատարելու, և այն համակարգելու նպատակով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հանձնարարությամբ, 2021 թվականին բոլոր վարույթների քննությունը կենտրոնացվել է Զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում և նախաքննության պլանավորման արդյունքում միավորվել 7 հիմնական ուղղություններով, այդ թվում՝ ըստ ռազմական գործողությունների, ուղղությունների, առանձին օպերացիաների և կարևոր քաղաքների պաշտպանության կազմակերպման:

Քրեական վարույթներով պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով ամենօրյա ռեժիմով սահմանվել է վերահսկողություն, գործուն միջոցներ են ձեռնարկվել քննության արդյունավետությունը բարձրացնելու, այդ թվում՝ առերևույթ հանցանքների հանգամանքների բացահայտմանն ուղղված աշխատանքների ընթացքը պլանավորելու, պետական կառավարման մարմինների հետ համագործակցությունը համակարգելու, քննության ընթացքում ի հայտ եկած խնդիրներին պատշաճ և արագ արձագանքելու ուղղությամբ:

Իրականացված մեծածավալ ապացուցողական և վարութային գործողությունների արդյունքում, որոնց ծավալը գերազանցել է 2000 հատորը, բոլոր ուղղություններով պարզվել են հանցավոր իրավախախտումների էական հանգամանքները, ըստ օրերի արձանագրվել են մարտական գործողությունների ընթացքն ու արդյունքները, իրավական գնահատական է տրվել առերևույթ հանցանքներ կատարած անձանց արարքներին:

Զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության և այդ վարչություն գործուղված քննիչներն անուրանալի ավանդ են ներդրել դժվար և քրեադատավարական ոչ ստանդարտ իրավիճակներում կատարված հանցավոր արարքների բոլոր հանգամանքները պարզելու, արձանագրելու և դրանց համարժեք իրավական գնահատական տալու գործում:

ՀՀ քննչական կոմիտեն պատվով կատարել է իր առջև դրված խնդիրն այն գիտակցումով, որ վավերագրում է ժամանակակից հայոց պատմության կարևոր էջերից մեկը:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն

(վարչության պետ՝ Ազատ Գևորգյան)



ԵՔԲՎ ղեկավար անձնակազմ և ծանր հանցագործությունների քննության բաժին



Վարչության գլխավոր վարչական շենքը գտնվում է Երևան քաղաքի Պ. Սևակի փողոց 4 հասցեում:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության կազմում են գործում ծանր հանցագործությունների քննության, ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների, Ավան և Նոր Նորք վարչական շրջանների, Արաբկիր վարչական շրջանի, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական 1-ին,

2-րդ և 3-րդ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Շենգավիթ վարչական շրջանի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժինները:

2014-2024թթ. ընթացքում Երևան քաղաքի քննչական վարչությունում քննվել է 143.541 քրեական վարույթ, որը կազմում է տասը տարիների ընթացքում ՀՀ քննչական կոմիտեում քննված վարույթների 46 տոկոսը:

Քննված 143.541 վարույթից 14.462 վարույթ՝ 17.168 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 36.494 վարույթ կարճվել է, 16.819 վարույթ միացվել է, 11.195 վարույթ ուղարկվել է այլ մարմին:



*ԵՔՔՎ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժին
(բաժնի պետ՝ Գոռ Ալոյան)*

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 2.578.514.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 1.320.143.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 1.854.610.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ վարչությունն ու-

նեցել է 223 հաստիքային միավոր, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 338 հաստիքային միավորով:

Գրանցված տարեկան արդյունքներով՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժինը (2017թ.), Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաննե-



ԵՔՔՎ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժին

(բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Գոռ Ավագյան)

րի քննչական բաժինը (2021թ.), Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժինը (2022թ.) և Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժինը (2023թ.) ճանաչվել են «Տարվա ստորաբաժանում»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորա-

բաժանման ծառայողներն արժանացել են 1.837 խրախուսանքի, այդ թվում՝ 10 ծառայող արժանացել է պետական պարգևների:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների 25,3 տոկոսը կազմում են կին ծառայողները:

**ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին
(բաժնի պետ՝ Էդգար Բալոյան)**





Գործունեությունն իրականացնում է երևան քաղաքի Մազմանյան փողոց 5 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվել է 12.008 քրեական վարույթ, որից 1.193-ը՝ 1.351 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 2.886 վարույթ կարճվել է, 1.236 վարույթ միացվել է, 922 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 60.402.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 44.695.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 271.475.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 19 հաստիքային միավոր՝ բաժնի պետ,

բաժնի պետի տեղակալ - 2, քննիչ - 5, ավագ քննիչ - 11, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 27 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 3, ՀԿԳ քննիչ - 5, ավագ քննիչ - 10, քննիչ - 8:

2017թ. ընթացքում գրանցած արդյունքներով՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռևիկ Սեդրակյանը ճանաչվել է «Տարվա քննիչ»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 152 խրախուսանքի:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների 33 տոկոսը կազմում են կին ծառայողները:

**ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին**
(բաժնի պետ՝ Հայրապետ Հայրապետյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Նորքի 1-ին գանգվածի Բորյան փողոց 1 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվել է 14.368 քրեական վարույթ, որից 1.083-ը՝ 1.304 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3.697 վարույթ կարճվել է, 1.499 վարույթ միացվել է, 896 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 187.847.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 128.393.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 111.200.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 20 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, քննիչ - 5, ավագ քննիչ - 12, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 26 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 3, ՀԿԳ քննիչ - 5, ավագ քննիչ - 11, քննիչ - 6: 2017թ. գրանցված արդյունքներով՝ Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների քննչական բաժինը ճանաչվել է «Տարվա ստորաբաժանում»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 156 խրախուսանքի:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների 21 տոկոսը կազմում են կին ծառայողները:

**ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Հովհաննես Պողոսյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Կոմիտասի պողոտա 51ա հասցեում:

2014-2024թթ. ընթացքում Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննվել է 16.531 քրեական վարույթ, որից 1.519-ը՝ 1.692 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3.639 վարույթ կարճվել է, 1.656 վարույթ միացվել է, 1.274 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 63.703.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 2.773.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 277.785.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 25 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, քննիչ - 8, ավագ քննիչ - 14, իսկ ներկայումս աշխատանքներն իրականացվում են 34 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 3, ՀԿԳ քննիչ - 7, ավագ քննիչ - 13, քննիչ - 10:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 208 խրախուսանքի:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների 27 տոկոսը կազմում են կին ծառայողները:

**ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին**

(բաժնի պետ՝ Համբարձում Պետրոսյան)





Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մ. Խորենացի փողոց 162 հասցեում:

2014-2024թթ. ընթացքում Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվել է 13.956 քրեական վարույթ, որից 1.484-ը՝ 1.646 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3.556 վարույթ կարճվել է, 1.308 վարույթ միացվել է, 866 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 350.330.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 197.480.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 204.707.000 ՀՀ դրամը:

2014թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ քննչական բաժինն ունեցել է 22 հաստիքային միավոր՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 2, քննիչ - 6, ավագ քննիչ - 13, իսկ ներկայումս աշխատանքներն իրակա-

նացվում են 29 հաստիքային միավորով՝ բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ - 3, ՀԿԳ քննիչ - 5, ավագ քննիչ - 10, քննիչ - 10:

2016թ. ընթացքում կատարած աշխատանքի համար Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Սուրեն Մանուկյանը ճանաչվել է «Տարվա քննիչ», իսկ 2023թ. գրանցված արդյունքներով՝ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժինը ճանաչվել է «Տարվա ստորաբաժանում»:

Տասնամյա գործունեության ընթացքում ստորաբաժանման ծառայողներն արժանացել են 196 խրախուսանքի, այդ թվում՝ 1 ծառայող արժանացել է պետական պարգևի:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների 30 տոկոսը կազմում են կին ծառայողները:

**ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի
Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին**

(բաժնի պետ՝ Երջանիկ Գևորգյան)





Կազմավորվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի հիմքի վրա՝ 2021թ. հուլիսի 1-ին:

Գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Խանջյան փողոց 43 հասցեում:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում քննվել է 5.728 վարույթ, որից 367-ը՝ 439 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1.399 վարույթ կարճվել է, 711 վարույթ միացվել է, 803 վարույթ ուղարկվել է այլ մարմին:

Քննված վարույթներով՝ պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 288.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 18.762.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 59.602.000 ՀՀ դրամը:

